



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

12.12.2019թ.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ**  
**ՔՆՆՈՂ ԱՆՁԻ**  
**թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/96**

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի  
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն  
Բողոք բերող՝ «Արեմպա Ինթերնեյշնլ» ՍՊԸ ՖԶԸ  
Երրորդ անձ՝ «Դելտա Քոնսթրաքշն» ՍՊԸ

Մասնակցությամբ՝  
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայության ներկայացուցիչներ՝ Գ. Հարությունյանի,  
Ռ. Դարբինյանի,

«Արեմպա Ինթերնեյշնլ» ՍՊԸ ՖԶԸ-ի ներկայացուցիչներ՝ Ն. Առաքելյանի, Վ.  
Փափազյանի, Ա. Փափազյանի,

«Դելտա Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Ա. Պարանյանի, Հ. Ենգոյանի, Ա.  
Աբրահամյանի, Գ. Մալիշենկոյի, Wang Zujun-ի, Lui Cong-ի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝  
«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՀՄԱ-ԱՊՁԲ-19/1» ծածկագրով բաց մրցույթ, անվտանգության  
ռենտգեն սարքերի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Արեմպա Ինթերնեյշնլ» ՍՊԸ ՖԶԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 25.11.2019թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

## **Պ Ա Ր Զ Ե Ց**

### **1. Գործի նախապատմությունը**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՀՄԱ-ԱՊԶԲ-19/1» ծածկագրով հրատակ մեկ անձից ձեռքբերման նպատակով հայտարարված մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 20.11.2019թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված «Դելտա Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու և 1-ին տեղ զբաղեցրած՝ հաղթող մասնակից ճանաչելու մասին որոշումը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 25.11.2019թ.-ին և նույն օրը կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ ու հրապարակվել [www.gnumner.am](http://www.gnumner.am) կայքում:

28.11.2019թ.-ին և 10.12.2019թ.-ին նշանակվել են նիստեր:

28.11.2019թ. -ին «Դելտա Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն ներգրավվել է գործով որպես երրորդ անձ:

Բողոքի քննությունն ավարտվել է 10.12.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 12.12.2019թ.-ին:

### **2. «Արեմպա Ինթերնեյշնլ» ՍՊԸ ՖԶԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Արեմպա Ինթերնեյշնլ» ՍՊԸ ՖԶԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««ԱՐԵՄՊԱ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՍՊԸ ՖԶԸ ներկայացնում է բողոք ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՀՄԱ-ԱՊԶԲ-19/1 ծածկագրով ՀՀ ԱՆ Քրեակարգադատական ծառայության կարիքների համար՝ անվտանգության ռենտգեն սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարված հրատարակ մեկ անձի ձևով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունների և/կամ անգործության դեմ:

Եվ այսպես՝ Պարվիրատուի կողմից անվտանգության ռենտգեն սարքերի ձեռքբերման նպատակով 12.11.19թ. հայտարարվել է հրատապ մեկ անձի գնման ձևի ընտրությամբ նախատեսված մրցույթ:

Հայտերի բացման ժամկետ է նախատեսվել 15.11.19թ.:

Մրցույթին հայտ են ներկայացրել երեք մասնակիցների՝ Դելտա Քոնսթրաքշն ՍՊԸ-ն, Արեմպա Ինթերնեյշնլ ՍՊԸ ՖԶԸ-ն, Էլկոմպ ՍՊԸ-ն:

Հայտ ներկայացրած մասնակիցներից նվազագույն գին է ներկայացրել Դելտա Քոնսթրաքշն ՍՊԸ-ն:

Մրցույթի հանձնաժողովը N 2 արձանագրության 1.6 կետում արձանագրել է, որ Դելտա Քոնսթրաքշն ՍՊԸ-ի և Էլկոմպ ՍՊԸ-ի արձանագրվել են անհամապատասխանություններ և նրանց տրվել է ժամկետ դրանք շտկելու համար:

Մրցույթի հանձնաժողովի N 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ վերոնշյալ մասնակիցները շտկել են արձանագրված անհամապատասխանությունները, և նրանց հայտերը գնահատվել է բավարար:

Մրցույթի հանձնաժողովի կողմից հաղթող մասնակից է ճանաչվել Դելտա Քոնսթրաքշն ՍՊԸ-ն և սահմանվել է անգործության ժամկետ:

Անգործության ժամկետի վերաբերյալ հայտարարությունը 21.11.19թ. հրապարակվել է [gnumner.am](http://gnumner.am) կայքում և դրա վերջնաժամկետ է հաստատվել 26.11.19թ.:

Արեմպա Ինթերնեյշնլ ՍՊԸ ՖԶԸ-ն հայտնում է իր անհամաձայնությունը N 3 արձանագրությունում արձանագրված Դելտա Քոնսթրաքշն ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելուն և հաղթող ճանաչելուն ստորև նշված հիմքերով:

Եվ այսպես.

Մրցույթի հրավերով սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

Հավելված 1

Անվտանգության ռենտգեն սարքեր

- Ռենտգենյան անվտանգության ստուգման սարքավորումները բաղկացած են բեռնախցիկի փոխակրիչ մասից, ռենտգենյան աղբյուրից և հսկիչ մասից, ազդանշանային հավաքման և մշակման և փոխանցման մասերից, պատկերների մշակման և էլեկտրական կառավարման մասերից:
- Կրկնակի էներգիայի ներթափանցման համակարգ
- TIP ծրագիր
- Պարզ և հստակ պատկեր
- Սկանավորված պատկերը կարող է խոշորացվել մինչև 64 անգամ
- Պարկերի մշակման առնվազն 15 գործառույթներ և առնվազն 4 տեսակ կեղծ գույն
- Պարկերների գործածման հզոր ունակություն

- Ճշգրիտ գծանշում պայթուցիկ նյութերի եւ թմրամիջոցների համար
- Առնվազն Windows 7, 64-բիթանոց օպերացիոն համակարգ
- Սկանավորված պատկերի ավտոմատ պահպանում
- Հեշտ օգտագործվող օպերացիոն համակարգ
- Վստահելի արտադրողականություն
- Նախատեսված է փոքր և միջին չափի իրերի, զենքի, պայթուցիկ նյութերի, թմրանյութերի և այլ ապրանքների առկայությունը ստուգելու համար:
- Հարմարավետ օգտագործման համար, պեղք է ապահովի իր դասում ամենամեծ արագությունն ու հայտնաբերման հնարավորությունները և առավելագույնս օգտագործում՝ հասանելի փարածքը:
- Հարմարեցված պորտֆելի, ձեռքի ուղեբեռի, փոստային ծանրոցների փոքր և միջին փաթեթների անվրանգության ստուգման համար:
- Կիրառման բնագավառը. ՀՀ ԱՆ Քրեակադրոնական հիմնարկներ:

**Տեխնիկական նկարագիր**

- Թունելի չափը՝ ոչ պակաս քան 600 մմ x 400 մմ և ոչ ավել քան 630 մմ x 430 մմ,
- կոնվեյերի արագությունը՝ առնվազն 0.20 մ / վ, երկկողմանի սկան
- կոնվեյերի բարձրությունը՝ 690մմ – 810մմ,
- Առավելագույն բեռ՝ առնվազն 165 կգ
- Լարերի լուծաչափ՝ առնվազն 42AWG
- Ներթափանցում՝ առնվազն 41 մմ պողպատե վահանակ
- գեներատորի անոթի աշխատանքային լարումը՝ 160 ԿՎ
- Սառեցման / օպերացիոն ցիկլ՝ յուղային սառեցում / 100%
- Պատկերի մշակում՝ գույն / սև և սպիտակ պատկեր, բացասական պատկեր, բարձր ներթափանցում, ցածր ներթափանցում, ստուգում ետ / առաջ, ավտոմատ պահում պատկեր, կեղծ գույն, օրգանական / օրգանական զտում
- Խոշորացում՝ փոփոխական խոշորացում մինչև X64, շարունակական խոշորացման աջակցում
- Պատկերի ստուգում՝ պատկերի անընդհատ ստուգում
- Պահպանման հզորություն՝ առնցազն 100,000 պատկեր
- ճառագայթման արտահոսք՝ <1 USv/h (շրջանակից 5 սմ հեռավորության վրա)՝ լիովին համապատասխանություն ճառագայթային անվրանգության միջազգային բոլոր պահանջներին:
- Համակարգի գործառույթ՝ կարմիր, կապույտ, կանաչ ծրագրավորվող ստեղներ, բարձր խտության ազդանշանը , TIP , ամսաթվի / ժամանակի ցուցադրում , ուղեբեռի հաշվարկում, օգտագործողի կառավարումում, համակարգի աշխատանքի ժամկետներ, ճառագայթման ժամկետ, ինքնա ստուգումը, միացման ժամանակ, էներգախնայողության և որոնման պատկեր, ավտոմատ կերպով պահպանման և արտորոշման համակարգ, պատկերի ճանաչման դասընթաց
- Շրջանակի չափը՝ ոչ ավել 870մմ x 1400մմ x 2100մմ (լայնություն/բարձրություն/երկարություն) չափերից,
- Քաշը՝ ոչ ավել 550 կգ-ից,
- Շրջակա միջավայրի ջերմաստիճանը / խոնավությունը՝ - 0°C ~+40°C/5% ~95% (առանց կոնդենստի)
- Պահպանման ջերմաստիճանը / խոնավությունը՝ -20 + 50 °C / 5% ~ 95% առանց կոնդենստի)

- Հզորություն՝ 220VAC (+/-10%) 50/60Հց
- Սպառում՝ ոչ ավել քան 1,5kW

**Համակարգիչ՝**

- Մայրական սալիկ (motherboard) առնվազն 6-րդ սերնդի i5 պրոցեսորի աշխատանքի ապահովման համար
- Պրոցեսոր (processor)՝ առնվազն Intel i5:
- Օպերատիվ հիշողություն (RAM)՝ առնվազն 4GB DDR4:
- Կարծր մարմնային կուրակիչ (HDD)՝ առնվազն 512GB,

**Մոնիտոր (Monitor 24 inch)՝**

- Օգտագործվող հատվածի անկյունագծի չափսը առնվազն 23.5" դյույմ,
- Կերայնություն՝ առնվազն 1920x1080 Full HD
- Հաճախականությունը՝ առնվազն 60Հց:

Վերը նշված տեխնիկական բնութագրով սահմանված ապրանքները պետք է լինեն նոր, և գործարանային արտադրության:

**Լրացուցիչ պայմաններ՝**

Երաշխիքային ժամկետն առնվազն 1 տարի: Բոլոր սարքավորումների Երաշխիքային սպասարկման ապահովում արտադրողի պաշտոնական ավտորիզացված սպասարկման կենտրոնում և/կամ սերտեֆիկացված մասնագետի կողմից:

Բեռնումը, տեղափոխումը (պատվիրատուի կողմից տրամադրված հասցեներով՝ ք. Երևան և ՀՀ մարզեր) և բեռնաթափումը կատարվում է մատակարարի միջոցների հաշվին:

Տեղադրումը կատարվում է մատակարարի միջոցների հաշվին, պատվիրատուի կողմից նախապես տրամադրված և հարմարեցված տեղերում, բոլոր ՔԿ հիմնարկներում:

Դելտա Քոնսթրաքշըն ՍՊԸ-ն N 1.1 հավելվածով, առաջարկվող ապրանքի նկարագրով առաջարկել է Nuctech Co. Limited ֆիրմային անվանման, Nuctech Company Limited CX 6040BI ապրանքը:

Սակայն Դելտա Քոնսթրաքշըն ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքը չի համապատասխանել մրցույթի հրավերով սահմանված տեխնիկական պայմաններին, այդ իսկ պատճառով էլ մասնակցին Պատվիրատուն տվել է հնարավորություն շրկելու համար անհամապատասխանությունները:

Դելտա Քոնսթրաքշըն ՍՊԸ-ն շրկման փուլում քոփի փաստ /copy paste/ է արել հրավերի տեխ. բնութագրերը, ներկայացնելով որպես իր կողմից առաջարկվող ապրանքի բնութագիր: Սակայն պետք է նշել կամ արձանագրել, որ Դելտա Քոնսթրաքշըն ՍՊԸ-ն N 1.1 հավելվածով, առաջարկվող ապրանքի նկարագրով առաջարկված Nuctech Co. Limited ֆիրմային անվանմամբ Nuctech Company Limited CX 6040BI ապրանքը իրականում չի

համապատասխանում հրավերի տեխ. բնութագրին: Համեմատության համար ներկայացնում ենք ստորև մեր կողմից պատրաստված համեմատական աղյուսակը.

<b>ՀՐԱՎԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋԸ</b>	<b>ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՊԱՐԱՄԵՏՐԵՐԸ</b>	<b>ՃԻՇՏ ՊԱՐԱՄԵՏՐԸ ԸՍՏ ԱՐՏԱԴՐՈՂԻ</b>
Ռենտգենյան անվտանգության ստուգման սարքավորումները բաղկացած են բեռնախցիկի փոխակրիչ մասից, ռենտգենյան աղբյուրից և հսկիչ մասից, ազգանշանային հավաքման և մշակման և փոխանցման մասերից, պատկերների մշակման և էլեկտրական կառավարման մասերից:	<b>Nuctech CX 6040BI</b>	<b>Nuctech CX 6040BI</b>
<b>Տեխնիկական նկարագիր</b>		
Թունելի չափը՝ ոչ պակաս քան 600 մմ x400 մմ և ոչ ավել քան 630 մմ x 430 մմ.	Թունելի չափը 60C x420 մմ	
Կոնվեյերի արագությունը՝ առնվազն 0.20 մ / վ. երկկողմանի սկան	Կոնվեյերի արագությունը՝ 0.20 երկկողմանի սկան	Պետք է որ փնի միակողմանի սկանի հնարավորություն
Կոնվեյերի բարձրությունը՝ 690մմ - 810մմ.	Կոնվեյերի բարձրությունը՝ 690 մմ	Կոնվեյերի բարձրությունը՝ 680 մմ
Առավելագույն բեռ՝ առնվազն 165 կգ	Առավելագույն բեռ՝ 165 կգ	Առավելագույն բեռ՝ 160 կգ
Լաքերի լուծաչափ՝ առնվազն 42AWG	Լաքերի լուծաչափ 42AWG	Լաքերի լուծաչափ 40AWG
Ներթափանցում՝ առնվազն 41 մմ պողպատե վահանակ	Ներթափանցում՝ 41 մմ պողպատե վահանակ	Ներթափանցում՝ 38 մմ պողպատե վահանակ
գեներատորի անոդի աշխատանքային լարումը՝ 160 ԿՎ	գեներատորի անոդի աշխատանքային լարումը 160 kW	
Սառեցման / օպերացիոն ցիկլ՝ յուղային սառեցում/ 100%	Սառեցման / օպերացիոն ցիկլ յուղային սառեցում /100%	

Պատկերի մշակում՝ գույն / սև և սպիտակ պատկեր, բացասական պատկեր, բարձր ներթափանցում, ցածր ներթափանցում, ստուգում ետ / առաջ, ավտոմատ պահում պատկեր, կեղծ գույն, օրգանական /		
Խոշորացում՝ փոփոխական խոշորացում մինչև X64, շարունակական խոշորացման աջակցում	Խոշորացում՝ փոփոխական խոշորացում մինչև X64. շարունակական խոշորացման աջակցում	Խոշորացում՝ փոփոխական խոշորացում մինչև X32.
Պատկերի ստուգում՝ պատկերի անընդհատ ստուգում	Պատկերի ստուգում պատկերի անընդհատ ստուգում	
Պահպանման հզորություն՝ առնցազն 100,000 պատկեր	Պահպանման հզորություն՝ մինչև 100.000	Պահպանման հզորություն՝ մինչև 50,000
ճառագայթման արտահոսք՝ <1 USv h (շրջանակից 5 սմ հեռավորության վյսս)՝ լիովին համապատասխանություն ճառագայթային անվտանգության միջազգային բոլոր պահանջներին:	ճառագայթման արտահոսք՝ <1 USv I: (շրջանակից 5 սմ հեռավորության վյսս)՝ լիովին համապատասխանություն ճառագայթային անվտանգության միջազգային բոլոր պահանջներին:	
Համակարգի գործառույթ կարմիր, կապույտ, կանաչ ծրագրավորվող ստեղծ, բարձր խտության ազդանշանը . TIP , ամսաթիվի / ժամանակի ցուցադրում . ուղեբեռի հաշվարկում, օգտագործողի կառավարումում, համակարգի աշխատանքի ժամկետներ, ճառագայթման ժամկետ, ինքնա ստուգումը, միացման ժամանակ, էներգախնայողության և որոնման պատկեր, ավտոմատ կերպով պահպանման և ախտորոշման համակարգ, պատկերի ճանաչման դասընթաց	Համակարգի գործառույթ՝ կարմիր, կապույտ, կանաչ ծրագրավորվող ստեղծ, բարձր խտության ազդանշանը . TIP , ամսաթիվի / ժամանակի ցուցադրում ուղեբեռի հաշվարկում, օգտագործողի կառավարումում. համակարգի աշխատանքի ժամկետներ, ճառագայթման ժամկետ, ինքնա ստուգումը, միացման ժամանակ, էներգախնայողության և որոնման պատկեր, ավտոմատ կերպով պահպանման և ախտորոշման համակարգ, պատկերի ճանաչման դասընթաց	
Շրջանակի չափը՝ ոչ ավել 870մմ x 1400մմ x 21 00մմ (լայնություն/բարձրություն/երկարություն) չափերից,	Շրջանակի չափը՝ 850 x 1300 x 2042 (լայնություն/բարձրություն/երկարություն) մմ	
Քաշը՝ ոչ ավել 550 կգ ից.	Քաշը՝ 510 կգ	Քաշը 640 կգ
Շրջակա միջավայրի ջերմաստիճանը /	Շրջակա միջավայրի ջերմաստիճանը	

խոնավությունը ' - 0°C ~-40°(5% ~95% (առանց կոնդենստի)	/խոնավությունը ' 0°C ~ +40°C/5% ~95% (առանց կոնդենստի)	
Պահպանման ջերմաստիճանը / խոնավությունը՝ - 20 + 50 °C / 5% ~ 95% առանց կոնդենստի)	Պահպանման ջերմաստիճանը / խոնավությունը՝ 20 + 50 C / 5% ~ 95% առանց կոնդենստի)	
Հզորություն՝ 220VAC (+/-10%) 50/60Հց	Հզորություն՝ 220VAC (+/-10%) 50/60Հց	
Սպառում՝ ոչ ավել քան 1,5kW	Սպառում՝ 0.8kV	
<b>Համակարգիչ՝</b> Մայրական սալիկ (motherboard) առնվազն 6-րդ սերնդի 15 պրոցեսորի աշխատանքի ապահովման համար • Պրոցեսոր (processor)՝ առնվազն Intel 15: • Օպերատիվ հիշողություն (RAM) առնվազն 4GB DDR4: * Կարծր մարմնային կուրակիչ (HDD) առնվազն 512GB,	<b>Համակարգիչ՝</b> Մայրական սալիկ 6-րդ սերնդի 17 պրոցեսոր Պրոցեսոր - Intel 17. Օպերատիվ հիշողություն (RAM) 8GB DDR4 . Կարծր մարմնային կուրակիչ (HDD) - առնվազն 512GB:	
<b>Մոնիտոր (Monitor 24 inch)՝</b>	<b>Մոնիտոր (Monitor 24 inch)՝</b>	<b>Մոնիտոր (Monitor 24 inch)՝</b>
Օգտագործվող հարվածի անկյունագծի չափսը առնվազն 23.5" դյույմ, Կերայնությունն առնվազն 1920x1080 Full HD Հաճախականությունը՝ առնվազն 60Հց:	24" Առավելագույն կերայնությունը 1920x1080՝ Full HD Հաճախականությունը՝ 144 Հց	24" Առավելագույն կերայնությունը 1920x1080՝ Full IHD Հաճախականությ ությունը 144 Հց
Վերը նշված տեխնիկական բնութագրով սահմանված ապրանքները պետք է լինեն նոր, և գործարանային արտադրության:		

Վերը Ներկայացված աղյուսակից ակնհայտ է դառնում, որ Դելտա Քոնսթրաքշըն ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքը չի կարող ունենալ մրցույթի հրավերով պահանջվող ապրանքի տեխ. բնութագրերը:

Գտնում ենք, որ տվյալ դեպքում Դելտա Քոնսթրաքշըն ՍՊԸ-ն հայտը պետք է մերժվի, քանի որ չի համապատասխանում հրավերով նախատեսված պայմաններին:

Գնումների մասին ՀՀ օրենքի 34 հոդվածի համաձայն.



1. Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

2. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝

1) բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Տվյալ դեպքում Մեր կազմակերպությունը գտնում է, որ Դելտա Քոնսթրաքշն ՍՊԸ-ի հայտը չի համապատասխանում հրավերով նախատեսված պայմաններին, ինչի պարագայում Մրցույթի հանձնաժողովի կողմից պետք է մերժվեր վերջինիս հայտը, սակայն չի մերժվել: Չմերժելու արդյունքում խախտվել է Գնումների մասին ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի, նույն Օրենքի 3-րդ հոդվածի դրույթները:»:

Ելնելով վերոգրյալից, «Արեմպա Ինթերնեյշնլ» ՍՊԸ ՖԶԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝ պարտավորեցնել «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՀՄԱ-ԱՊՁԲ-19/1» ծածկագրով հրատակ մեկ անձից ձեռքբերման նպատակով հայտարարված մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 20.11.2019թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված «Դելտա Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու և 1-ին տեղ զբաղեցրած՝ հաղթող մասնակից ճանաչելու մասին որոշումը:

**3. ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.**

Բողոքներ քննող անձը 25.11.2019թ.-ի գրությամբ դիմել է ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայությանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Արեմպա Ինթերնեյշնլ» ՍՊԸ ՖԶԸ-ի կողմից 25.11.2019թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստին և ներկայացրել բանավոր դիրքորոշում՝ հայտնելով, որ հաղթող մասնակցի կողմից ապրանքի տեխնիկական բնութագիրը ստանալուց և ուսումնասիրելուց հետո համացանցի միջոցով փորձել են տեղեկանալ, արդյոք նշված արտադրողի նշված ապրանքը համապատասխան է հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին, քանի որ

առաջացել էր կասկած, այն բանից հետո, երբ ներկայացված տեխնիկական բնութագիրը ուսումնասիրելու արդյունքում ակնհայտ է դարձել, որ բառացի և տառացի կրկնօրինակված է տեխնիկական պահանջը, անգամ «մինչև» և «առնվազն» բառերով: Համացանցում [www.nuctech.com/](http://www.nuctech.com/) կայքում տեսնելով, որ դա չի համապատասխանում CX 6040BI մոդելին, ուղարկվել է հարցում Ընկերությանը, որից հետո Ընկերության աշխատակցի հետ տեղի է ունեցել հեռախոսազրույց, և նա հայտնել է, որ հավելյալ կուղարկի վերը նշված ընկերության գործարանի կողմից հավաստագիր, որ այդ մոդելը համապատասխանում է տեխնիկական բնութագրին: Այնուհետև Ընկերությունը ներկայացրել է գործարանի կողմից տրամադրված բնութագիրը և ճանաչվել հաղթող մասնակից:

Ընկերությանը ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ և վերջինիս հայտնել են, որ ապրանքը ստանալուց հետո այն անցնելու է փորձաքննություն վերոնշյալ հանգամանքներից ելնելով, և անհամապատասխանության դեպքում չի ընդունվելու Պատվիրատուի կողմից:

Վերջում լրացնելով խոսքը, Պատվիրատուի ներկայացուցիչը հավելեց, որ եթե պարզվի գործարանի և Ընկերության գրագրության մեջ եղել է կեղծիք, ինչ որ բան նախապես պատրաստվել է այս մրցույթին մասնակցելու նպատակով, Պատվիրատուն դատական կարգով փոխհատուցում է պահանջելու:

#### **4. Երրորդ անձ՝ «Դելտա Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.**

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, Բողոքներ քննող անձի որոշմամբ թիվ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՀՄԱ-ԱՊՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ընտրված/հաղթող մասնակից ճանաչված «Դելտա Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն ներգրավվել է գործով որպես երրորդ անձ (այսուհետ նաև՝ Երրորդ անձ):

«Դելտա Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի ներկայացուցիչները ներկայանալով հրավիրված նիստերին և ներկայացնելով գրավոր դիրքորոշում, հայտնել են հետևյալը.

*«25.11.2019թ. «Արեմպա Ինթերնեյշնլ» ՍՊԸ ՖԶԸ-ի կողմից ներկայացվել է բողոք, որով վիճարկվել է ՀՀ ԱՆ Քրեակադրոնական ծառայության կողմից կազմակերպված ՀՀՀՀ ԱՆ ՔԿԾ-ՀՄԱ-ԱՊՁԲ-19/1» ծածկագրով հրապապ մեկ անձից գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կայացրած որոշումները, մասնավորապես՝ «Արեմպա Ինթերնեյշնլ» ՍՊԸ ՖԶԸ-ն բողոքով խնդրել է դադարեցնել*

<<Դելտա Քոնսթրաքշն>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը հրավերի պահանջներին համապատասխանող գնահատելու և հաղթող մասնակից ճանաչելու մասին որոշումները:

«Արեմպա Ինթերնեյշնլ» ՊԸ ՖԶԸ-ի կողմից 20.09.2019թ. ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2019/66 բողոքի հիմքում դրվել է այն հանգամանքը, որ իբր թե <<Դելտա Քոնսթրաքշն>> ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքը չի համապատասխանում հրավերի տեխնիկական բնութագրին և որ ամենակարևորն է՝ այդ եզրահանգման «Արեմպա Ինթերնեյշնլ» ՊԸ ՖԶԸ-ն եկել է բացառապես հիմք ընդունելով անհասկանալի <<արտադրողի թերթիկը>>:

Եվ այսպես՝ մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից 18.11.2019թ. ներկայացվել էր գրություն, որով իբր թե գնահատող հանձնաժողովը արձանագրել էր անհամապատասխանություններ՝ արձանագրելով թե CX6040BI մակնիշի անվրանգության ռենտգեն սարքի տեխնիկական բնութագիրը մի շարք չափանիշներով չի համապատասխանում Հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին /չնշելով թե ինչ անհամապատասխանությունների մասին է խոսքը/, այնինչ <<Դելտա Քոնսթրաքշն>> ՍՊԸ-ի կողմից որպես ապրանքի տեխնիկական բնութագիր՝ նույնությամբ ներկայացվել էր հրավերում ներառված տեխնիկական բնութագիրը:

Այնուհանդերձ՝ <<Դելտա Քոնսթրաքշն>> ՍՊԸ-ն սահմանված ժամկետում պատասխանել է շտկման վերաբերյալ ստացված նամակին, մասնավորապես հայտնելով՝ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՀՄԱ-ԱՊՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Ձեր կողմից 18.11.2019թ. «ԴԵԼՏԱ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ին ուղարկված ծանուցմանն ի պատասխան՝ հայտնում եմ, որ ընթացակարգի հայտով ներկայացված տեխնիկական բնութագիրը ամբողջությամբ համապատասխանում է ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին և դա ոչ թե թյուրիմացության կամ copy-paste-ի արդյունք է, այլ բազմակողմանի ուսումնասիրության ենթարկված փաստաթուղթ: Եվս մեկ անգամ հավաստում եմք, որ մեր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը ամբողջությամբ համապատասխանում է մեր կողմից ներկայացված և հրավերով սահմանված չափանիշներին և տեղավորվում է հրավերով թույլատրելի համարվող միջակայքերում:

Գնահատող հանձնաժողովը հայտերի գնահատումն իրականացնում է ներկայացված փաստաթղթերի շրջանակներում և եթե դրանք համապատասխանում են ընթացակարգի հրավերի պահանջներին, ապա հայտը պետք է գնահատվի բավարար, իսկ համացանցից ստացված տեղեկությունները չեն կարող հիմք հանդիսանալ մասնակցի հայտում անհամապատասխանություն արձանագրելու համար: Մեր կողմից ներկայացված

տեխնիկական բնութագիրը ամբողջությամբ համապատասխանում է հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին, հեևաբար այն չի կարող գնահատվել հրավերի պահանջներին ոչ համապատասխան, ինչ վերաբերվում է ապրանքի մակնիշին, ապա «Nuctech» ընկերության հետ համագործակցության արդյունքում առկա է վերջիններիս հավաստումն առ այն, որ CX6040BI մակնիշի սարքի տեխնիկական բնութագիրը ամբողջությամբ համապատասխանում է հրավերի պահանջներին:

Չնայած ընթացակարգի հրավերով հստակ սահմանված են այն փաստաթղթերը, որոնք պետք է ներառվեն մասնակցի հայտում և դրանցից բացի մասնակցից այլ փաստաթղթեր պահանջելու իրավասություն գնահատող հանձնաժողովը չունի, այնուամենայնիվ, ներկայացնում ենք արտադրող գործարանի կողմից տրված համապատասխանության հայտարարությունը՝ կից պարզաբանումներով և արտադրողի ավտորիզացիոն նամակը:

Մրցույթի գնահատող հանձնաժողովի 20.11.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 1.5 կետի համաձայն <<Դելտա Քոնսթրաքշն>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի շտկված տարբերակը գնահատվել է բավարար և նույն կետի 4-րդ ենթակետի համաձայն 1-ի չափաբաժնի մասով հաղթող մասնակցի է ճանաչվել <<Դելտա Քոնսթրաքշն>> ՍՊԸ-ն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Հայտը գնահատվում է բավարար, եթե նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

Համաձայն <<<< ԱՆ ՔԿԾ-ՀՄԱ-ԱՊՁԲ-19/1>> ծածկագրով հրատապ մեկ անձից գնում կատարելու ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի սահմանվել են հետևյալ պայմանները՝

• Ռենտգենյան անվտանգության սրուգման սարքավորումները բաղկացած են բեռնախցիկի փոխակրիչ մասից, ռենտգենյան աղբյուրից և հսկիչ մասից, ազդանշանային հավաքման և մշակման և փոխանցման մասերից, պատկերների մշակման և էլեկտրական կառավարման մասերից:

- Կրկնակի էներգիայի ներթափանցման համակարգ
- TTP ծրագիր
- Պարզ և հստակ պատկեր

- Սկանավորված պատկերը կարող է խոշորացվել մինչև 64 անգամ
- Պատկերի մշակման առնվազն 15 գործառույթներ և առնվազն 4 տեսակ կեղծ գույն
- Պատկերների գործածման հզոր ունակություն
- Ճշգրիտ գծանշում պայթուցիկ նյութերի եւ թմրամիջոցների համար
- Առնվազն Windows 7, 64-բիթանոց օպերացիոն համակարգ
- Սկանավորված պատկերի ավտոմատ պահպանում
- Հեշտ օգտագործվող օպերացիոն համակարգ
- Վստահելի արտադրողականություն
- Նախատեսված է փոքր և միջին չափի իրերի, զենքի, պայթուցիկ նյութերի, թմրանյութերի և այլ

սպրանքների առկայությունը ստուգելու համար:

- Հարմարավետ օգտագործման համար, պետք է ապահովի իր դասում ամենամեծ արագությունն ու հայտնաբերման հնարավորությունները և առավելագույնս օգտագործում՝ հասանելի տարածքը:

- Հարմարեցված պորտֆելի, ձեռքի ուղեբեռի, փոստային ծանրոցների փոքր և միջին փաթեթների անվտանգության ստուգման համար:

- Կիրառման բնագավառը. << ԱՆ Քրեակալարողական հիմնարկներ:

**Տեխնիկական նկարագիր**

- Թունելի չափը՝ ոչ պակաս քան 600 մմ x 400 մմ և ոչ ավել քան 630 մմ x 430 մմ,
- կոնվեյերի արագությունը՝ առնվազն 0.20 մ / վ, երկկողմանի սկան
- կոնվեյերի բարձրությունը՝ 690մմ – 810մմ,
- Առավելագույն բեռ՝ առնվազն 165 կգ
- Լարերի լուծաչափ՝ առնվազն 42AWG
- Ներթափանցում՝ առնվազն 41 մմ պողպատե վահանակ
- գեներատորի անոդի աշխատանքային լարումը՝ 160 ԿՎ
- Սառեցման / օպերացիոն ցիկլ՝ յուրաքանչյուր սառեցում / 100%
- Պատկերի մշակում՝ գույն / սև և սպիտակ պատկեր, բացասական պատկեր, բարձր

ներթափանցում, ցածր ներթափանցում, ստուգում ետ / առաջ, ավտոմատ պահում պատկեր, կեղծ գույն, օրգանական / օրգանական զրում

- Խոշորացում՝ փոփոխական խոշորացում մինչև X64, շարունակական խոշորացման աջակցում
- Պատկերի ստուգում՝ պատկերի անընդհատ ստուգում
- Պահպանման հզորություն՝ առնցազն 100,000 պատկեր
- ճառագայթման արտահոսք՝ <1 USv/h (շրջանակից 5 սմ հեռավորության վրա)՝ լիովին

համապատասխանություն ճառագայթային անվտանգության միջազգային բոլոր պահանջներին:

- Համակարգի գործառույթ՝ կարմիր, կապույտ, կանաչ ծրագրավորվող սրեղնը, բարձր խտության ազդանշանը , TIP , ամսաթիվի / ժամանակի ցուցադրում , ուղեբեռի հաշվարկում, օգտագործողի կառավարումում, համակարգի աշխատանքի ժամկետներ, ճառագայթման ժամկետ, ինքնա ստուգումը, միացման ժամանակ, էներգախնայողության և որոնման պատկեր, ավտոմատ կերպով պահպանման և ախտորոշման համակարգ, պատկերի ճանաչման դասընթաց

- Շրջանակի չափը՝ ոչ ավել 870մմ x 1400մմ x 2100մմ (լայնություն/բարձրություն/երկարություն) չափերից,

- Քաշը՝ ոչ ավել 550 կգ-ից,
- Շրջակա միջավայրի ջերմաստիճանը / խոնավությունը՝ - 0°C ~+40°C/5% ~95% (առանց կոնդենստի)

- Պահպանման ջերմաստիճանը / խոնավությունը՝ -20 + 50 °C / 5% ~ 95% առանց կոնդենստի)
- Հզորություն՝ 220VAC (+/-10%) 50/60Հց
- Սպառում՝ ոչ ավել քան 1,5kW

**Համակարգիչ՝**

Մայրական սալիկ (motherboard) առնվազն 6-րդ սերնդի i5 պրոցեսորի աշխարանքի ապահովման համար

- Պրոցեսոր (processor)՝ առնվազն Intel i5:
- Օպերատիվ հիշողություն (RAM)՝ առնվազն 4GB DDR4:
- Կարծր մարմնային կուրակիչ (HDD)՝ առնվազն 512GB,

**Մոնիտոր (Monitor 24 inch)՝**

- Օգտագործվող հատվածի անկյունագծի չափսը առնվազն 23.5" դյույմ,
- Կերայնությունն՝ առնվազն 1920x1080 Full HD
- Հաճախականությունը՝ առնվազն 60Հց:

Վերը նշված տեխնիկական բնութագրով սահմանված ապրանքները պետք է լինեն նոր, և գործարանային արտադրության:

**Լրացուցիչ պայմաններ՝**

Երաշխիքային ժամկետն առնվազն 1 տարի: Բոլոր սարքավորումների Երաշխիքային սպասարկման ապահովում արտադրողի պաշտոնական ավտորիզացված սպասարկման կենտրոնում և/կամ սերտիֆիկացված մասնագետի կողմից:

Բեռնումը, տեղափոխումը (պարավիրատուի կողմից տրամադրված հասցեներով՝ ք. Երևան և ՀՀ մարզեր) և բեռնաթափումը կատարվում է մատակարարի միջոցների հաշվին:

Տեղադրումը կատարվում է մատակարարի միջոցների հաշվին, պարավիրատուի կողմից նախապես տրամադրված և հարմարեցված տեղերում, բոլոր ՔԿ հիմնարկներում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին հայտնում ենք, որ «Դելտա Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՀՄԱ-ԱՊՁԲ-19/1» ծածկագրով հրատարակված մեկ անձից գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում ներկայացվել է հրավերի տեխնիկական բնութագրին համապատասխան Հավելված 1.1 /կցվում է/, որտեղ առկա չէ որևէ անհամապատասխանություն:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ «Դելտա Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը ամբողջությամբ համապատասխանում է հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին և ուղղակի անհասկանալի է բողոքաբերի այն պնդումը, որ այն չի համապատասխանում հրավերի պահանջներին՝ հիմք ընդունելով համացանցային անհասկանալի և ոչ պաշտոնական նյութը: Հնարավոր է, որ

բողոքաբերը փվյալներ վերցրած լինի «Nuctech» կազմակերպության պաշտոնական կայքում փեդադրված CX6040BI մակնիշի սարքի բազային մոդելի գովազդային թերթիկից, այնինչ գնման ընթացակարգի շրջանակներում <<Դելտա Քոնսթրաքշն>> ՍՊԸ-ի կողմից առաջարկվել է ոչ թե բազային մոդելը, այլ դրա կափարելագործված (UPGRADE) փարբերակը, որի փեխնիկական փվյալներն ամբողջությամբ համապատասխանում են ընթացակարգի հրավերով նախատեսված փեխնիկական բնութագրի պահանջներին, ինչի մասին վկայում են արտադրողի կողմից ներկայացված անհրաժեշտ փաստաթղթերը:

Ավելին << գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ենք ներկայացնում «Nuctech» ընկերության կողմից << ԱՆ Քրեակատարողական ծառայությանն ուղղված հավաստումն առ այն, որ CX6040BI մակնիշի սարքի փեխնիկական բնութագիրը ամբողջությամբ համապատասխանում է հրավերի պահանջներին:

Հարկ ենք համարում նշել նաև, որ <<Դելտա Քոնսթրաքշն>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը 10,999,700 << դրամով պակաս է «Արեմպա Ինթերնեյշնլ» ՊԸ ՖԶԸ-ի գնային առաջարկից, բացի այդ, <<Դելտա Քոնսթրաքշն>> ՍՊԸ-ի կողմից ևս 29,966,800 դրամ վճարվելու է պետական բյուջե՝ որպես ավելացված արժեքի հարկ:»:

Ելնելով վերոգրյալից՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել են «Արեմպա Ինթերնեյշնլ» ՍՊԸ ՖԶԸ-ի կողմից 20.09.2019թ. ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/66 բողոքը մերժել:

Ի լրումն «Արեմպա Ինթերնեյշնլ» ՍՊԸ ՖԶԸ-ի կողմից 25.11.2019թ. ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/96 բողոքի վերաբերյալ «Դելտա Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիրքորոշման, լրացմամբ Երրորդ անձի ներկայացուցիչները հայտնել են հետևյալը.

«Ինչպես արդեն հայտնել էինք 25.11.2019թ. «Արեմպա Ինթերնեյշնլ» ՍՊԸ ՖԶԸ-ի կողմից ներկայացվել է բողոք, որով վիճարկվել է << ԱՆ Քրեակատարողական ծառայության կողմից կազմակերպված “<< ԱՆ ՔԿԾ-ՀՄԱ-ԱՊՁԲ-19/1” ծածկագրով հրատապ մեկ անձից գնում կափարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կայացրած որոշումները, մասնավորապես՝ «Արեմպա Ինթերնեյշնլ» ՍՊԸ ՖԶԸ-ն բողոքով խնդրել է դադարեցնել “Դելտա Քոնսթրաքշն” ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը հրավերի պահանջներին համապատասխան գնահատելու և հաղթող մասնակից ճանաչելու մասին որոշումները:

«Արեմպա Ինթերնեյշնլ» ՊԸ ՖԶԸ-ի կողմից 25.11.2019թ. ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2019/96 բողոքի հիմքում դրվել է այն հանգամանքը, որ իբր թե “Դելտա Քոնսթրաքշն” ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքը չի համապատասխանում հրավերի տեխնիկական բնութագրին և որ ամենակարևորն է՝ այդ եզրահանգման «Արեմպա Ինթերնեյշնլ» ՊԸ ՖԶԸ-ն եկել է բացառապես հիմք ընդունելով անհասկանալի “արտադրողի թերթիկը” տպագրված էլեկտրոնային կայքից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ մի շար կարևոր հանգամանք.

“Դելտա Քոնսթրաքշն” ՍՊԸ-ի կողմից “ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՀՄԱ-ԱՊՁԲ-19/1” ծածկագրով հրատարակ մեկ անձից գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում նույնությամբ ներկայացվել է հրավերի տեխնիկական բնութագրին համապատասխան Հավելված 1.1 /կցվում է/, որտեղ առկա չէ որևէ անհամապատասխանություն: Այսպիսով, “Դելտա Քոնսթրաքշն” ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը ամբողջությամբ համապատասխանում է հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին և նույնությամբ կրկնում Հրավերի պահանջները:

Նման պայմաններում, գտնում ենք, որ իրավաչափ չէր գնահատող հանձնաժողովի կողմից 18.11.2019թ. ներկայացված գրությամբ տեխնիկական բնութագրում շտկում կատարելու պահանջը, քանի որ “Դելտա Քոնսթրաքշն” ՍՊԸ-ի կողմից որպես ապրանքի տեխնիկական բնութագիր՝ նույնությամբ ներկայացվել էր հրավերում ներառված տեխնիկական բնութագիրը, իսկ ինչպես հայտնի է, շտկում կատարելու պահանջ կարող է ներկայացվել, եթե արձանագրվում է անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ, ինչը տվյալ դեպքում բացակայել է:

Նույն հիմնավորմամբ, անհիմն է նաև «Արեմպա Ինթերնեյշնլ» ՍՊԸ ՖԶԸ-ն կողմից ներկայացված բողոքը, քանի որ բողոքաբերը ընդամենը ինտերնետային կայքերից ստացված վերացական տեղեկատվությունից ենթադրությունների հիման վրա եզրակացրել է, որ հնարավոր է, որ “Դելտա Քոնսթրաքշն” ՍՊԸ-ի կողմից մատակարարվելիք ապրանքը չհամապատասխանի հրավերի պահանջներին: Մինչդեռ հավելված 1.1.-ով “Դելտա Քոնսթրաքշն” ՍՊԸ-ն հայտնել և հավաստել է, որ մատակարարելու է Հրավերով պահանջված ապրանքը:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք դարձնում նաև այն հանգամանքի վրա, որ «Արեմպա Ինթերնեյշնլ» ՍՊԸ ՖԶԸ-ն իր բողոքը կազմել է և վերլուծությունը իրականացրել է՝ հիմք ընդունելով ինտերնետում տեղադրված CX6040BI



մակնիշի սարքի գովազդային թերթիկները, սակայն նիստի ժամանակ բողոքաբերի կողմից փորձ արվեց վերոհիշյալ վերլուծությունը տարածել նաև “Դելտա Քոնսթրաքշն” ՍՊԸ-ի կողմից «Nuctech» ընկերության տրամադրած գրության և վերլուծության վրա: Սակայն ներկայացված բողոքում նման վերլուծություն կատարված չէ, իսկ բողոքի հիմքում դրված են միայն ինտերնետային կայքից վերցված տվյալների հիման վրա կատարված վերացական եզրահանգումներ:

Ինչ վերաբերում է նիստի ժամանակ հնչեցված այն դիրքորոշմանը, որ Հրավերով պահանջվել է պահպանման հզորություն՝ առնցազն 100,000 պատկեր, մինչդեռ, իբրև թե, ըստ բողոքաբերի՝ CX6040BI մակնիշի սարքի պահպանման հզորությունը առնցազն 50,000 պատկեր է, իսկ ըստ արտադրողի տրված պարզաբանման՝ մինչև 100,000 պատկեր է, ապա այս կապակցությամբ հայտնում ենք հետևյալը.

1. Նախ, բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն կարևորագյուն հանգամանքի վրա, որ “Դելտա Քոնսթրաքշն” ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում ՍՊԸ-ի կողմից հստակ նշվել է Հրավերով պահանջված պահպանման հզորություն՝ առնցազն 100,000 պատկերը: Այսինքն, խոսել հրավերի պահանջների վերաբերյալ անհամապատասխանության մասին այս փուլում նման փաստաթղթի առկայության պայմաններում ոչ իրավաչափ է:

2. «Nuctech» ընկերության տրամադրած գրությամբ նշվել է, որ պահպանման հզորությունը մինչև 100,000 պատկեր է, հրավերով նախատեսվել է առնվազն 100,000 պատկեր, այսինքն CX6040BI մակնիշի սարքի պահպանման հզորությունը կարող է կազմել նաև 100,000 պատկեր, ինչը համապատասխանում է հրավերի պահանջներին: Գտնում ենք, որ նման պայմաններում ընթացակարգի այս փուլում խոսել, որ CX6040BI մակնիշի սարքը չի ապահովի պահպանման հզորություն՝ 100,000 պատկեր, անթույլատրելի է, քանի որ սարքի հնարավորության վերին շեմը կազմում է հենց 100,000 պատկեր: Ուստի տեսականորեն նման անհամապատասխանությունը հնարավոր է պարզել ապրանքը մատակարարելու փուլում, երբ բացահայտվի, որ սարքի վերին շեմը չի ապահովում առնվազն 100,000 պատկեր:

3. Սույն գրությամբ ներկայացված «Nuctech» ընկերության տրամադրած վերլուծությամբ նաև բացատրված է, թե CX6040BI մակնիշի սարքը ինչպես է ապահովում պահպանման հզորությունը մինչև 100,000 պատկեր, այլ ոչ թե բողոքաբերի նշված մինչև 50,000 պատկերը:

Գտնում ենք, որ «Արեմպա Ինթերնեյշնլ» ՊԸ ՖԶԸ-ի կողմից ներկայացված բողոքը անհիմն է, կատարված եզրահանգումները չեն բխում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ ամրագրված իրավակարգավորումներից, իսկ վերլուծությունները արված են ինտերնետային կայքի վերացական տեղեկատվության հիման վրա:

Արդյունքում նման անհիմն բողոքը բավարարելու դեպքում ՀՀ պետական բնույթին կհասցվի մոտ 11 մլն ՀՀ դրամի վնաս, քանի որ ինչպես արդեն նշել ենք, «Դելտա Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի գնային առաջարկը 10,999,700 ՀՀ դրամով պակաս է «Արեմպա Ինթերնեյշնլ» ՊԸ ՖԶԸ-ի գնային առաջարկից:»

Ելնելով վերոգրյալից՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին կրկին խնդրել են «Արեմպա Ինթերնեյշնլ» ՍՊԸ ՖԶԸ-ի կողմից 20.09.2019թ. ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/66 բողոքը մերժել:

## **5. ԳԲՔԱ-ԼՕ-2019/96 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից անվտանգության ռենտգեն սարքերի ձեռքբերման նպատակով 12.11.2019թ.-ին հայտարարվել է «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՀՄԱ-ԱՊՁԲ-19/1» ծածկագրով մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ):

Մրցույթի հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում անվտանգության ռենտգեն սարքերը, որոնց հավելված 1-ի համաձայն, առաջադրվել է հետևյալ պայմանները՝

• Ռենտգենյան անվտանգության ստուգման սարքավորումները բաղկացած են բեռնախցիկի փոխակրիչ մասից, ռենտգենյան աղբյուրից և հսկիչ մասից, ազդանշանային հավաքման և մշակման և փոխանցման մասերից, պատկերների մշակման և էլեկտրական կառավարման մասերից:

- Կրկնակի էներգիայի ներթափանցման համակարգ
- T1P ծրագիր
- Պարզ և հստակ պատկեր
- Սկանավորված պատկերը կարող է խոշորացվել մինչև 64 անգամ
- Պատկերի մշակման առնվազն 15 գործառնություններ և առնվազն 4 տեսակ կեղծ գույն
- Պատկերների գործածման հզոր ունակություն
- Ճշգրիտ գծանշում պայթուցիկ նյութերի եւ թմրամիջոցների համար
- Առնվազն Windows 7, 64-բիթանոց օպերացիոն համակարգ
- Սկանավորված պատկերի ավտոմատ պահպանում
- Հեշտ օգտագործվող օպերացիոն համակարգ

- Վստահելի արտադրողականություն
- Նախատեսված է փոքր և միջին չափի իրերի, զենքի, պայթուցիկ նյութերի, թմրանյութերի և այլ ապրանքների առկայությունը ստուգելու համար:

- Հարմարավետ օգտագործման համար, պետք է ապահովի իր դասում ամենամեծ արագությունն ու հայտնաբերման հնարավորությունները և առավելագույնս օգտագործում՝ հասանելի տարածքը:

- Հարմարեցված պորտֆելի, ձեռքի ուղեբեռի, փոստային ծանրոցների փոքր և միջին փաթեթների անվտանգության ստուգման համար:

- Կիրառման բնագավառը. ՀՀ ԱՆ Քրեակատարողական հիմնարկներ:

**Տեխնիկական նկարագիր**

- Թունելի չափը՝ ոչ պակաս քան 600 մմ x 400 մմ և ոչ ավել քան 630 մմ x 430 մմ,
- կոնվեյերի արագությունը՝ առնվազն 0.20 մ / վ, երկկողմանի սկան
- կոնվեյերի բարձրությունը՝ 690մմ – 810մմ,
- Առավելագույն բեռ՝ առնվազն 165 կգ
- Լարերի լուծաչափ՝ առնվազն 42AWG
- Ներթափանցում՝ առնվազն 41 մմ պողպատե վահանակ
- գեներատորի անողի աշխատանքային լարումը՝ 160 ԿՎ
- Սառեցման / օսկերացիոն ցիկլ՝ յուրաքանչյուր սառեցում / 100%
- Պատկերի մշակում՝ գույն / սև և սպիտակ պատկեր, բացասական պատկեր, բարձր ներթափանցում, ցածր ներթափանցում, ստուգում ետ / առաջ, ավտոմատ պահում պատկեր, կեղծ գույն, օրգանական / օրգանական զտում

- Խոշորացում՝ փոփոխական խոշորացում մինչև X64, շարունակական խոշորացման աջակցում
- Պատկերի ստուգում՝ պատկերի անընդհատ ստուգում
- Պահպանման հզորություն՝ առնցազն 100,000 պատկեր
- ճառագայթման արտահոսք՝ <1 USv/h (շրջանակից 5 սմ հեռավորության վրա)՝ լիովին համապատասխանություն ճառագայթային անվտանգության միջազգային բոլոր պահանջներին:

- Համակարգի գործառույթ՝ կարմիր, կապույտ, կանաչ ծրագրավորվող ստեղնը, բարձր խտության ազդանշանը . TIP , ամսաթիվի / ժամանակի ցուցադրում , ուղեբեռի հաշվարկում, օգտագործողի կառավարումում, համակարգի աշխատանքի ժամկետներ, ճառագայթման ժամկետ, ինքնա ստուգումը, միացման ժամանակ, էներգախնայողության և որոնման պատկեր, ավտոմատ կերպով պահպանման և ախտորոշման համակարգ, պատկերի ճանաչման դասընթաց

- Շրջանակի չափը՝ ոչ ավել 870մմ x 1400մմ x 2100մմ (լայնություն/բարձրություն/երկարություն)

չափերից,

- Քաշը՝ ոչ ավել 550 կգ-ից,
- Շրջակա միջավայրի ջերմաստիճանը / խոնավությունը՝ - 0°C ~ +40°C/5% ~ 95% (առանց կոնդենստի)

կոնդենստի)

- Պահպանման ջերմաստիճանը / խոնավությունը՝ -20 + 50 °C / 5% ~ 95% առանց կոնդենստի)

կոնդենստի)

- Հզորություն՝ 220VAC (+/-10%) 50/60Հց
- Սպառում՝ ոչ ավել քան 1,5kW

**Համակարգիչ՝**

- Մայրական սալիկ (motherboard) առնվազն 6-րդ սերնդի i5 պրոցեսորի աշխատանքի ապահովման համար

- Պրոցեսոր (processor)՝ առնվազն Intel i5:
- Օպերատիվ հիշողություն (RAM)՝ առնվազն 4GB DDR4:
- Կարծր մարմնային կուտակիչ (HDD)՝ առնվազն 512GB,

**Մոնիտոր (Monitor 24 inch)՝**

- Օգտագործվող հատվածի անկյունագծի չափսը առնվազն 23.5" դյույմ,

- Կետայնությունն՝ առնվազն 1920x1080 Full HD
- Հաճախականությունը՝ առնվազն 60Հց:

Արցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 18.11.2019թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ հիմք ընդունելով Հրավերի 8.9 կետը, քանի որ հայտերի գնահատման արդյունքում Մասնակիցների՝ «Դելտա Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի և «Էլկոմպ» ՍՊԸ-ի հայտերում արձանագրվել են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է ծանուցել մասնակիցներին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ մինչև 19.11.2019թ.-ի ավարտը, շտկել անհամապատասխանությունը, հակառակ դեպքում Մասնակիցների անհամապատասխան հայտերը կգնահատվեն անբավարար և կմերժվեն:

Հանձնաժողովի 20.11.2019թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ հրավերով սահմանված ժամկետում՝ «Դելտա Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն և «Էլկոմպ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովին են ներկայացրել հայտերում արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ շտկումներ:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, ընթացակարգի բոլոր Մասնակիցների հայտերի գնահատման արդյունքում որոշել է «Դելտա Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի շտկված տարբերակը գնահատել բավարար և առաջին տեղ զբաղեցրած՝ հաղթող մասնակից ճանաչել «Դելտա Քոնսթրաքշն» ՍՊԸ-ին, երկրորդ տեղ՝ ընտրված մասնակից ճանաչել «Արեմպա Ինթերնեյշնլ» ՍՊԸ ՖԶԸ-ին:

21.11.2019թ.-ին [www.gnumner.am](http://www.gnumner.am) կայքում հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն:

«Դելտա Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից թիվ 1.1 հավելվածով՝ մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի տեխնիկական բնութագիր դաշտում նշվել է հետևյալը՝

*«• Ռենդգենյան անվտանգության սպուդման սարքավորումները բաղկացած են բեռնախցիկի փոխակրիչ մասից, ռենդգենյան աղբյուրից և հսկիչ մասից, ազդանշանային հավաքման և մշակման և փոխանցման մասերից, պատկերների մշակման և էլեկտրական կառավարման մասերից:*

- Կրկնակի էներգիայի ներթափանցման համակարգ
- TIP ծրագիր
- Պարզ և հստակ պատկեր
- Սկանավորված պատկերը կարող է խոշորացվել մինչև 64 անգամ
- Պատկերի մշակման առնվազն 15 գործառույթներ և առնվազն 4 տեսակ կեղծ գույն
- Պատկերների գործածման հզոր ունակություն
- Ճշգրիտ գծանշում պայթուցիկ նյութերի եւ թմրամիջոցների համար
- Առնվազն Windows 7, 64-բիթանոց օպերացիոն համակարգ
- Սկանավորված պատկերի ավտոմատ պահպանում

- Հեշտ օգտագործվող օպերացիոն համակարգ
- Վստահելի արտադրողականություն
- Նախատեսված է փոքր և միջին չափի իրերի, զենքի, պայթուցիկ նյութերի, թմրանյութերի և այլ ապրանքների առկայությունը ստուգելու համար:

• Հարմարավետ օգտագործման համար, պետք է ապահովի իր դասում ամենամեծ արագությունն ու հայրնաբերման հնարավորությունները և առավելագույն օգտագործում՝ հասանելի տարածքը:

• Հարմարեցված պորտֆելի, ձեռքի ուղեբեռի, փոստային ծանրոցների փոքր և միջին փաթեթների անվտանգության ստուգման համար:

- Կիրառման բնագավառը. ՀՀ ԱՆ Քրեակադրոնական հիմնարկներ:

**Տեխնիկական նկարագիր**

- Թունելի չափը՝ ոչ պակաս քան 600 մմ x 400 մմ և ոչ ավել քան 630 մմ x 430 մմ,
- կոնվեյերի արագությունը՝ առնվազն 0.20 մ / վ, երկկողմանի սկան
- կոնվեյերի բարձրությունը՝ 690մմ – 810մմ,
- Առավելագույն բեռ՝ առնվազն 165 կգ
- Լարերի լուծաչափ՝ առնվազն 42AWG
- Ներթափանցում՝ առնվազն 41 մմ պողպատե վահանակ
- գեներատորի անողի աշխատանքային լարումը՝ 160 ԿՎ
- Սառեցման / օպերացիոն ցիկլ՝ յուրային սառեցում / 100%
- Պատկերի մշակում՝ գույն / սև և սպիտակ պատկեր, բացասական պատկեր, բարձր ներթափանցում, ցածր ներթափանցում, ստուգում եր / առաջ, ավտոմատ պահում պատկեր, կեղծ գույն, օրգանական / օրգանական զրում

• Խոշորացում՝ փոփոխական խոշորացում մինչև X64, շարունակական խոշորացման աջակցում

- Պատկերի ստուգում՝ պատկերի անընդհատ ստուգում
- Պահպանման հզորություն՝ առնցազն 100,000 պատկեր
- ճառագայթման արտահոսք՝ <1 USv/h (շրջանակից 5 սմ հեռավորության վրա)՝ լիովին համապատասխանություն ճառագայթային անվտանգության միջազգային բոլոր պահանջներին:

• Համակարգի գործառույթ՝ կարմիր, կապույտ, կանաչ ծրագրավորվող սրեղնը, բարձր խտության ազդանշանը, TIP, ամսաթիվի / ժամանակի ցուցադրում , ուղեբեռի հաշվարկում, օգտագործողի կառավարումում, համակարգի աշխատանքի ժամկետներ, ճառագայթման ժամկետ, ինքնա ստուգումը, միացման ժամանակ, էներգախնայողության և որոնման պատկեր, ավտոմատ կերպով պահպանման և ավտորոշման համակարգ, պատկերի ճանաչման դասընթաց

• Շրջանակի չափը՝ ոչ ավել 870մմ x 1400մմ x 2100մմ (լայնություն/բարձրություն/երկարություն) չափերից,

- Քաշը՝ ոչ ավել 550 կգ-ից,
- Շրջակա միջավայրի ջերմաստիճանը / խոնավությունը՝ - 0°C ~+40°C/5% ~95% (առանց կոնդենստի)

- Պահպանման ջերմաստիճանը / խոնավությունը՝ -20 + 50 °C / 5% ~ 95% առանց կոնդենստի)
- Հզորություն՝ 220VAC (+/-10%) 50/60Հց
- Սպառում՝ ոչ ավել քան 1,5kW

**Համակարգիչ՝**

• Մայրական սալիկ (motherboard) առնվազն 6-րդ սերնդի i5 պրոցեսորի աշխատանքի ապահովման համար

- Պրոցեսոր (processor)՝ առնվազն Intel i5:
- Օպերատիվ հիշողություն (RAM)՝ առնվազն 4GB DDR4:
- Կարծր մարմնային կուրակիչ (HDD)՝ առնվազն 512GB,

**Մոնիտոր (Monitor 24 inch)՝**

- Օգտագործվող հարվածի անկյունագծի չափսը առնվազն 23.5" դյույմ,
- Կերայնություն՝ առնվազն 1920x1080 Full HD
- Հաճախականությունը՝ առնվազն 60Հց:

Վերը նշված տեխնիկական բնութագրով սահմանված ապրանքները պետք է լինեն նոր, և գործարանային արտադրության:

*Լրացուցիչ պայմաններ՝*

*Երաշխիքային ժամկետն առնվազն 1 տարի: Բոլոր սարքավորումների Երաշխիքային սպասարկման ապահովում արտադրողի պաշտոնական ավտորիզացված սպասարկման կենտրոնում և/կամ սերտիֆիկացված մասնագետի կողմից:*

*Բեռնումը, տեղափոխումը (պատվիրատուի կողմից տրամադրված հասցեներով՝ ք. Երևան և ՀՀ մարզեր) և բեռնաթափումը կատարվում է մատակարարի միջոցների հաշվին:*

*Տեղադրումը կատարվում է մատակարարի միջոցների հաշվին, պատվիրատուի կողմից նախապես տրամադրված և հարմարեցված տեղերում, բոլոր ՔԿ հիմնարկներում:»:*

«Դելտա Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված “Nuctech” ընկերության Nuctech CX 6040BI ֆիրմայի արտադրանքի տեխնիկական բնութագրում առկա «Պահպանման հզորություն՝ մինչև 100,000 պատկեր» բնութագիրը չի համապատասխանում Հրավերով պահանջված՝ «Պահպանման հզորություն՝ առնվազն 100.000 պատկեր» բնութագրին:

## **6. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.**

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Արեմպա Ինթերնեյշնլ» ՍՊԸ ՖԶԸ-ի կողմից 25.11.2019թ.-ին ներկայացված բողոքն հիմնավոր է և ենթակա է ամբողջությամբ բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում

ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (10.10.2019թ.-ի թիվ 1422-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ ... ապրանքների գնման դեպքում նշվում է նաև առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, արտադրողի, ծագման երկրի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: Ընդ որում, պայմանագրի կատարման փուլում այն կնքած մասնակցից ծագման երկրի սերտիֆիկատ չի պահանջվում:

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե նույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ մասնակիցը հայտով ապրանքների գնման դեպքում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը: Հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթերի առկայության (համապատասխանության) դեպքում է հնարավոր մասնակցի հայտը գնահատել հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող, հակառակ դեպքում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում արձանագրված



անհամապատասխանությունը չշտկելու դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Կարգի 67-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը կարող է պատճառաբանված որոշման դեպքում ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

«ԱՆ Քրեակատարողական ծառայության կողմից կենցաղային թափոնների կոնտեյներների ձեռքբերման նպատակով 12.11.2019թ.-ին հայտարարված «ԱՆ ՔԿԾ-ՀՄԱ-ԱՊՁԲ-19/1» ծածկագրով մրցույթի հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ գնման առարկան է հանդիսանում անվտանգության ռենտգեն սարքերը:

Հանձնաժողովի 18.11.2019թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և որոշել է ծանուցել «Դելտա Քոնսթրաքշն» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել հայտում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունը:

Հանձնաժողովի 20.11.2019թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ հանձնաժողովը որոշել է «Դելտա Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի շտկված տարբերակը գնահատել բավարար և վերջինիս առաջին տեղ զբաղեցրած՝ հաղթող մասնակցից ճանաչել, երկրորդ տեղ՝ ընտրված մասնակցից ճանաչել «Արեմպա Ինթերնեյշնլ» ՍՊԸ ՖԶԸ-ին:

Ուսումնասիրելով «Դելտա Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված թիվ 1.1 հավելվածով ներկայացված մատակարարվելիք ապրանքի ամբողջական նկարագիրը, համադրելով այն Հրավերի թիվ 1 հավելվածում առկա տեխնիկական բնութագրին, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ անհամապատասխանություններ առկա չեն: Նման պայմաններում Հանձնաժողովի կողմից «Դելտա Քոնսթրաքշն» ՍՊԸ-ին

ներկայացված մինչև կասեցման ժամկետի ավարտը հայտում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ առաջարկը չի բխում Կարգի որևէ իրավական կարգավորումից, քանի որ հայտում առկա տվյալները ենթակա են շտկման Կարգի 41-րդ կետի դրույթների հիման վրա, այն է՝ պետք է հայտում արձանագրվի անհամապատասխանություն (ներ) հրավերի պահանջների և պայմանների նկատմամբ:

Ի հակադրումն վերոնշյալների, Հանձնաժողովը, մասնակցին առաջարկել է շտկել նկարագիրը, իսկ ի հավաստումն իր նկարագրում առկա տվյալների իսկության համապատասխանության՝ հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին, «Դելտա Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի ներկայացրած “Nuctech” ընկերության Nuctech CX 6040BI ֆիրմայի արտադրանքի տեխնիկական բնութագիրը՝ տրված արտադրողի կողմից, դիտարկվել է որպես շտկում:

Այն դեպքում, երբ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Հանձնաժողովը մասնակցի ներկայացրած տվյալների իսկության նկատմամբ հիմնավոր կասկած ունենալու դեպքում պետք է ոչ թե առաջարկեր ներկայացնել անհամապատասխանությունների շտկում, այլ, ղեկավարվելով Կարգի 67-րդ կետի դրույթներով սահմանված պահանջներով կարող էր ստուգել դրանք՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ՝ նշվածի մասին կայացնելով պատճառաբանված որոշում (արձանագրություն):

Ընդ որում, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Պատվիրատուի ներկայացուցիչները ներկայանալով հրավիրված նիստին փաստել են, որ «Դելտա Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից ապրանքի տեխնիկական բնութագիրը ստանալուց և ուսումնասիրելուց հետո համացանցի միջոցով փորձել են տեղեկանալ, արդյոք նշված արտադրողի նշված ապրանքը համապատասխան է հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին, քանի որ առաջացել էր կասկած, այն բանից հետո, երբ ներկայացված տեխնիկական բնութագիրը ուսումնասիրելու արդյունքում ակնհայտ է դարձել, որ բառացի և տառացի կրկնօրինակված է տեխնիկական պահանջը, անգամ «մինչև» և «առնվազն» բառերով: Համացանցում՝ [www.nuctech.com](http://www.nuctech.com) կայքում տեսնելով, որ դա չի համապատասխանում CX 6040BI մոդելին, ուղարկվել է հարցում Ընկերությանը, որից հետո Ընկերության աշխատակցի հետ տեղի է ունեցել հեռախոսազրույց, և նա հայտնել է, որ հավելյալ կուղարկի վերը նշված ընկերության գործարանի կողմից հավաստագիր, որ այդ մոդելը համապատասխանում է տեխնիկական բնութագրին: Այնուհետև Ընկերությունը

ներկայացրել է գործարանի կողմից տրամադրված բնութագիրը և ճանաչվել հաղթող մասնակից:

Սույն գործի փաստերի ուսումնասիրության արդյունքում, Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ «Դելտա Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված “Nuctech” արտադրող ընկերության կողմից տրված Nuctech CX 6040BI ֆիրմայի արտադրանքի տեխնիկական բնութագրում առկա «Պահպանման հզորություն՝ մինչև 100,000 պարկեր» բնութագիրը չի համապատասխանում Հրավերով պահանջված՝ «Պահպանման հզորություն՝ առնվազն 100.000 պարկեր» բնութագրին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Հանձնաժողովի կողմից 20.11.2019թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված «Դելտա Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի շտկված տարբերակը բավարար գնահատելու և վերջինիս առաջին տեղ զբաղեցրած՝ հաղթող մասնակից ճանաչելու մասին որոշումը ոչ իրավաչափ է, չի բխում Կարգի 41-րդ և 67-րդ կետերով սահմանված դրույթներից, որպիսի պայմաններում «Արեմպա Ինթերնեյշնլ» ՍՊԸ ՖԶԸ-ի կողմից ներկայացված բողոքն ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

«Արեմպա Ինթերնեյշնլ» ՍՊԸ ՖԶԸ-ի կողմից 25.11.2019թ.-ին ներկայացված ԳԲԲԱ-ԼՕ-2019/96 ծածկագրով բողոքը բավարարել:

Պարտավորեցնել «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՀՄԱ-ԱՊՁԲ-19/1» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 20.11.2019թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված «Դելտա Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու և 1-ին տեղ զբաղեցրած՝ հաղթող մասնակից ճանաչելու մասին որոշումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ  
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝**



**ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**